



ՀԱՎԳԻՏՈՒԹՅԱՆ
ԵՒ
ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

6



NATIONAL ACADEMY OF SCIENCES, RA
INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

PROCEEDINGS OF THE INSTITUTE
OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY
HAIA-6

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК, РА
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

ТРУДЫ ИНСТИТУТА
АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ
ХАИА-6

YEREVAN
IAE PUBLICATION 2024
ЕРЕВАН
ИЗДАТЕЛЬСТВО ИАЭ 2024

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՒ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱԽԱ - 6

ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ԵՒ
ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
6

ԵՐԵՎԱՆ
ՀԱԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2024

*Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության
ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ*

*Published by decision of the Scientific Council
of the Institute of Archaeology and Ethnography, NAS RA*

Խմբագրական խորհուրդ

Գլխավոր խմբագիր՝ Արսեն Բոբոկյան

Գլխավոր խմբագրի տեղակալ՝ Տորք Դալալյան

Խմբագրակազմ՝ Լևոն Աբրահամյան, Պավել Ավերիսյան,
Աստղիկ Բաբաջանյան, Ռուբեն Բադալյան, Միհրան Գալստյան,
Ջուսյոթ Թրախնա, Թեո վան Լինթ, Լորի Խաչատրյան, Ռուբեն Կարապետյան,
Թամար Հայրապետյան, Արսեն Հարությունյան, Սուրեն Հոբոսյան,
Դիանա Միրիջանյան, Ադամ Սմիթ, Պատրիկ Տոնապետյան, Պիյեր Բատի

Editorial Board

Editor-in-Chief: Arsen Bobokhyan

Vice-Editor-in-Chief: Tork Dalalyan

Editorial Stuff: Levon Abrahamian, Pavel Avetisyan, Astghik Babajanyan, Ruben Badalyan, Peter Cowe, Patrick Donabédian, Mihran Galstyan, Arsen Harutyunyan, Tamar Hayrapetyan, Suren Hobosyan, Ruben Karapetyan, Lori Khatchadourian, Theo van Lint, Diana Mirijanyan, Adam Smith, Giusto Traina

ՀԱԻԱ պարբերականի հերթական՝ 6-րդ հատորն ընդգրկում է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի, Երևանի պետական համալսարանի, Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարանի, Սիրակուզայի համալսարանի (ԱՄՆ) հետազոտողների հոդվածները, որոնց նախնական տարբերակները որպես գեկուցում ներկայացվել են ՀՀ ԿԳՄՄՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի ֆինանսավորմամբ 2023 թ. հոկտեմբերի 18-19-ին ՀԱԻ Սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի կազմակերպած «Համաշխարհայնացումը և սոցիալ-մշակութային արդի գործընթացները Հայաստանում. հիմնախնդիրներ և հեռանկարներ» գիտաժողովին: Հատորը եզրափակվում է մեկ հաղորդմամբ և Բեյրութում հրատարակվող Հայկազեան հայագիտական հանդեսի երկու համարների գրախոսությամբ:

ISSN 2953-805X

DOI:10.54503/2953-805X

© ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, 2024

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅՆԱՑՈՒՄ ԵՒ ՄԻԳՐԱՑԻՈՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ

7

Միհրան Գալստյան

Մնալ, թե՛ գնալ. Հայաստանից հնարավոր նոր արտագաղթի սոցիալ-մշակութային հիմնախնդրի շուրջ

8

Լուսինե Տանաջյան

Հայ և այլազգի ներգաղթյալների ինտեգրումը Հայաստանում. համեմատական կողմեր

24

Սոնա Ներսիսյան

Հայաստանը ռուսաստանցի ներգաղթյալների ընկալումներում

37

Սյուզաննա Բաբսեղյան

Հայաստանի հայրենադարձության քաղաքականության հիմնահարցերն արդի իրողությունների համատեքստում

49

II. ՆԵՐԳԱՐԹՅԱԼՆԵՐ ԵՒ ՏԵՂԱՅԱՆՎԱԾՆԵՐ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԼԱՆԴՇԱՖՏԸ

65

Գայանե Հակոբյան

«Հալեալի շուկան»՝ որպես սիրիահայերի ձեռնարկատիրական գործունեության միկրոմոդել

66

Գարիկ Աթանեսյան

Առտենտիկության խոսույթը և բեմադրված ժառանգությունը հետխորհրդային Հայաստանի զբոսաշրջային պրակտիկաներում

78

Արմինե Տիգրանյան

Ադրբեջանի կողմից բռնի տեղահանված արցախահայերի մշակութային կյանքին մասնակցության սահմանափակումները (Արցախի Հաղթութի շրջանի օրինակով)

89

III. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՒ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅՆԱՑՈՒՄ

113

Ռուբեն Օհանջանյան

Պրոֆեսիոնալ մշակութային արժեքների փոփոխման որոշ հարցեր ՀՀ-ում գլոբալիզացիայի համատեքստում

114

Լուսինե Անգելուշ

Հայաստանի Հանրապետության լեզվական քաղաքականությունն արդի շրջանում

124

Մակիչ Վարդանյան

Գլոբալացման խոսույթը հայաստանյան զլմ-ներում. կրթության հիմնախնդրի համատեքստը

139

IV. ԱՎԱՆԴԱԿԱՆՆ ՈՒ ԱՐԴԻԱԿԱՆԸ	
ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐՈՒՄ	157
<i>Սվերլյանա Պողոսյան</i>	
Հագուստը որպես խորհրդահայ և ետխորհրդահայ հասարակության սոցիալ-հոգեբանական ցուցիչ	158
<i>Հասմիկ Աբրահամյան</i>	
<i>Ռոման Հովսեփյան</i>	
Ուտեստի էթնոմշակութային դերը միգրացիայի շրջապատւոյտում (նախնական հետազոտություն՝ ըստ Սյունիքից գրառված նյութերի)	174
V. ՍՓՅՈՒՌՔՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ	189
<i>Ռուբեն Կարապետյան</i>	
Սփյուռքի համայնքային կառույցներում հայերի ներգրավվածության խնդիրը	190
<i>Նարե Գալստյան</i>	
Հայրենիքի մասին պատկերացումները Լոս-Անջելեսի հայկական համայնքում	204
<i>Նելլի Խաչատրյան</i>	
<i>Սալվինե Մարկոսյան</i>	
<i>Մարիամ Հարությունյան</i>	
Էթնոկրոնական վերափոխարկումը համաշխարհայնացման համատեքստում (հնդկական, թուրքական և իռլանդական սփյուռքների փորձի հիման վրա)	218
VI. ՀԱՂՈՐԴՈՒՄ	237
<i>Հռիփսիմե Ասատրյան</i>	
Մանկական բանահյուսության որոշ արդի դրսևորումներ	238
VII. ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ	247
Հայկազեան հայագիտական հանդեսի 2022 տարւոան զոյգ գիրքերը	248
ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ	263

ՀԱՅԳԻՏՈՒԹՅԱՆ
ԵՒ
ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

6

VII

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Հայկազեան հայագիտական հանդեսի 2022 տարուան զոյգ գիրքերը

Հայկազեան հայագիտական հանդեսը (ՀՀՀ) Սփիւռքի մէջ գոյատևող և ծաղկող բազմալեզու (անգլերէն, արաբերէն, մանաւանդ հայերէն) հայագիտական հանդես է: Ան հրատարակուիլ սկսած է 1970ին՝ Հայկազեան համալսարանի հայագիտական ամբիոնին կողմէ, խմբագրութեամբ դոկտ. Երուանդ Քասունիի:

Մինչև 1984, լոյս ընծայուած է 10 հատոր, ապա - Լիբանանի պատերազմին բերմամբ - ենթարկուած է պարտադիր ընդհատումի մինչև 1990: 1991ին, ան կը վերսկսի հրատարակուիլ՝ խմբագրակազմով մը զոր կը գլխաւորէ հայր Անդրանիկ վրդ. Կոստեան: Այնուհետև, տարեկան դրութեամբ *Հանդեսը* լոյս կ'ընծայուի մինչև 2018, երբ հայր Կոստեանի մահուան՝ զինք կը փոխարինէ դոկտ. Անդրանիկ Տազէսեան, խմբագրական կազմ ունենալով դոկտ.ներ Արտա Էքմէքճին, Արշալոյս Թովալեանը և Արմէն Իւրնէշլեանը:

Հանդեսը կը շարունակէ հրատարակուիլ իբրև տարեգիրք մինչև 2022: Այդ տարի ան կը վերածուի վեցամսեայի: Ստորև կը կատարենք *Հայկազեան հայագիտական հանդեսի* 2022ին լոյս ընծայուած զոյգ գիրքերուն բովանդակութիւնը:

Ջոյգ հատորները միասնաբար կը հաշուեն 1300 էջ (644+656) և կը հաշուեն 60 ուսումնասիրութիւն, քննարկում, հրապարակում ու միքանի գրախօսական և 28 մահագրական:

Յօդուածները խմբաւորուած են ըստ բնագաւառի՝ պատմութիւն-հնագիտութիւն, գրականութիւն, լեզու, տնտեսագիտութիւն, արուեստ և արհեստ, բանահիւսութիւն, եկեղեցի-փիլիսոփայութիւն:

Պատմութեան բնագաւառին մէջ, **Վարդան Մխիթարեանի** «Ադրբեջանական (թուրք-թաթարական) սպառնալիքները. տեղեկատուական պատերազմ» (42/1) վերնագրեալ յօդուածը լուսարձակի տակ կ'առնէ ազերի տարածքային նկրտումները՝ Լեռնային Ղարաբաղի և շրջակայքի տեղաբնիկ բնակչութեան և տարածքին վերաբերեալ ու փաստերով կ'ապացուցէ թէ ազերի 'գիտնականները' կեղծելով պատմական փաստերը կը ձգտին իրաւականացնել ազերի ախորժակները: Մխիթարեան ապացոյցներ կը բերէ ԺԺ. դարու աշխարհագրագէտներէ, ինչպէս՝ Իւան Իւանովիչ Շոփին և Ֆրեւտերիք Տիւպուա, ապա մանրամասնօրէն կ'ուսումնասիրէ Սևանի արևելակողմի ազերի նկրտումները, կը հերքէ զանոնք և կը հաւաստէ թէ շրջանն ու անոր մերձակայքը պատմականօրէն եղած են Հայկական լեռնաշխարհին անբաժանելի մասը՝ գոյացնելով Հայոց Արևելից Կողմանքը:

Յովիկ Գասապեան «Թեսաղոնիկէի (Սալոնիկ, Յունաստան) հայկական համայնքը 1990-2017 շրջանին» (42/1) ուսումնասիրութեամբ կը ներկայացնէ յունահայ այս ենթօճախին ներկայ վիճակը: Ենթօճախը կը յառաջանայ 1880ականներուն, ապա համիտեան ջարդերուն և կիլիկեան աղէտին հետևանքով կը ստուարանայ, իսկ Յեղասպանութենէն - մանաւանդ Զմիռնիոյ աղէտէն - ետք առաւել կը մեծնայ անոր թիւը՝ մինչև 1940ականներ, երբ հայրենադարձութեան և Արևմուտք արտագաղթի պատճառով կը նուազի: Հեղինակը կ'ընդգծէ թէ Խորհրդային Միութեան տարանջատումով և տնտեսական դժուարութիւններու պատճառով մեծաթիւ հայեր հաստատուած են Թեսաղոնիկէ: Ան կը քարտիսագրէ տեղական հայ կազմակերպութիւնները, կը ներկայացնէ անոնց յարաբերութիւնները իրենց միջավայրին, ինչպէս նաև պալքանեան երկիրներու հայօճախներուն հետ ու կը ծանրանայ ենթօճախին այժմու մարտահրաւերներուն վրայ:

Զաւէն Մսրըլեանի «Հայոց Յեղասպանութեան աղընչութեամբ նամակներ՝ բարձրաստիճան անձնատրութեանց և հրատարակչատուններու և անոնց պատասխանները» (42/1 և 42/2) տեղեկատուական յօդուածը կը ներկայացնէ անխոնջ պատմաբանին միանձնեայ ճիգերը այս բնագաւառին մէջ: Ան տասնամեակներ շարունակ նամակներով հակազդած է օտար գիրքերու, պարբերականներու և մամուլի մէջ Հայոց Յեղասպանութեան և Հայկական Հարցին մասին սխալ կամ թերի տեղեկութիւններուն: Շատ մը պարագաներու՝ արդիւնքը եղած է հայանպաստ ճշդումներ և բարեփոխումներ: *Հանդէսը* նախապէս (ԺԱ., ԻԲ., և ԻԶ. հատորներ) ևս կատարած էր նման հրապարակումներ նոյն հեղինակէն: Այս յօդուածին երկրորդ մասը լոյս տեսաւ *Հանդէսի* նոյն տարուան երկրորդ թիւին մէջ: Մսրըլեան այս գոյգ յօդուածներով կը ներկայացնէ 53 փաստաթուղթ:

Հայկ Նազարեան «Հայկական հակօդային պաշտպանութեան (ՀՕՊ) զօրքերի կազմաւորումը Արցախեան Ա. պատերազմի տարիներին» (42/2) նիւթով կը կատարէ վերլուծական պատումը Հայաստանի Հանրապետութեան հռչակումէն ետք երկրին օդային պաշտպանութեան համակարգի յառաջացման: Հեղինակը համառօտակի կ'անդրադառնայ խորհրդային տարիներու Հայաստանի օդային պաշտպանական դրութեան, ապա կը նշէ թէ պաշտպանութեան նախարարութեան հիմնումով (28 Յունուար 1992) սկիզբ կ'առնէ այս համակարգը, որուն բաժինը կը հիմնուի 14 Սեպտեմբեր 1992ին: Միաժամանակ կը հիմնուին նաև օդային պաշտպանութեան ուժերը Լեւոնային Ղարաբաղի: Այս երկուքը իրենց ամբողջ ծանրութեամբ մասնակցեցան դարաբաղեան առաջին պատերազմի մարտերուն և յաջողեցան ծանր հարուածներ հասցնել ազերի օդուժին:

Սերհակ Ամիրեան՝ «Ստալինիզմ և ՀԿ(բ)Կ կենտկոմի 1937ի չարագուշակ սեպտեմբերեան *պլենումը*» (42/1) ուսումնասիրութեամբ լուսարձակի տակ կ'առնէ Հայաստանի Համայնավար Կուսակցութեան Սեպտեմբեր 1937ի տխրահռչակ նիստը, ուր բիրտ և հակամարդկային որոշումներ առնուեցան և սկիզբ դրուեցաւ ստալինեան բռնարարքներուն՝ ողբերգական հետևանքներով:

Հեղինակը կը քննարկէ այն գործօնները որոնք առաջնորդեցին նման որոշումներու և կը վերլուծէ թեր ու դէմ տեսակետերը:

Վահրամ Լ. Շեմմասեան, «Միւսա Տաղի Հայ Աւետարանական Եկեղեցին, 1919-1939» (42/2) ուսումնասիրութեամբ կը ներկայացնէ Միւսա Լեռան Հայ Աւետարանական Եկեղեցիին պատմութիւնը՝ 1919-39 շրջանին:

Այդ շրջանին Եկեղեցին դիմագրաւեց բազում դժուարութիւններ: Միւս կողմէն, եղան վերականգնումի յատկանշական իրագործումներ՝ կիրակնօրեայ դպրոցներու վերաբացում, Ջանիցի և Կանանց Աստուածաշունչի խումբերու վերականգնում, յայտնուեցան նաև աշխոյժ հոգևոր հովիւներ: Հալէպի Հայ Աւետ. Եկեղեցին և ՄԱՀԱԵՄը (հիմն. 1924ին) յատուկ ուշադրութիւն դարձուցին Միւսա Լեռան: Ալեքսանտրէթի սանճաքին կցումով 1939ին՝ Միւսա Տաղի հայութիւնը վերաբնակեցաւ Սուրիա և Լիբանան: Միւսատաղցիք բնակեցան Լիբանանի Պեքայի հովիտին մէջ Այնճար: Ուսումնասիրութիւնը հիմնուած է արխիւային, նամակագրական, հարցազրոյցներու, մամուլի և այլ աղբիւրներու վրայ, որոնք առաջին անգամ կ'օգտագործուին:

Վարդան Մատթէոսեանի «Հալաճեան դատը (1909). հայոց քաղաքացիութեան դէմ առաջին իրաւական մարտահրաւերը Միացեալ Նահանգներու մէջ» (42/1) ուսումնասիրութիւնը լուսարձակի տակ կ'առնէ ամերիկահայոց իրաւական համարկման խնդիրներուն մէկ երեսակը: Թէ ինչպէս 1870ի քաղաքացիութեան օրէնքը քաղաքացիութիւն շնորհեց սպիտակամորթ գաղթականներուն, և սակայն՝ հարցը «սպիտակամորթ» բառին սահմանումն էր: Անկէ դուրս ձգուեցան չինացիք, ապա նաև փորձ կատարուեցաւ դուրս ձգելու 1890ականներուն Մ. Նահանգներ ժամանած միլիոնատր սպիտակամէտ գաղթականները (որոնց շարքին հայերը), որոնք եկան հարաւ-արևելեան և արևելեան Եւրոպայէն: Մատթէոսեան կը պատմէ թէ 1909ին ամերիկեան կառավարութիւնը վիճարկեց հայոց սպիտակամորթութիւնը, սակայն Պոստոնի մէջ, Հալաճեանի խնդրով բարձրացուած դատով, հայերը նկատուեցան... ճերմակամորթ և վերջ գտաւ հակամարդկային այս խնդիրը:

Հեղինակը իր երկրորդ ուսումնասիրութիւնով՝ «Աւետիք Իսահակեանին ուղղուած երկու նամակներու հետքերով» (42/2), կը հրապարակէ երկու անտիպ նամակ՝ գրուած Աշոտ Արծրունիի կողմէ, որ Իս. Հայաստանէն հեռացած էր 1929ին: Իսահակեան-ՀՅԴ յարաբերութիւնները խախտեցան Իսահակեանի՝ Իս. Հայաստանի հանդէպ բարեխառն կեցուածքին, հոսկ Իս. Հայաստան հաստատուելուն պատճառով: Յօդուածը կը վերլուծէ այս յարաբերութիւնները՝ մեկնելով Արծրունիի նամակներուն բովանդակութենէն:

Արտաշէս Ղազարեան «Հայ աւետարանական համայնքների գործունէութիւնը Խորհրդային Հայաստանում 1920ականներին» (42/2) ուսումնասիրութեամբ կը կատարէ պատումը Հայ Աւետ. Եկեղեցիին գործունէութեան՝ Իս. Հայաստանի առաջին տարիներուն: Արխիւային փաստաթղթերու հիմամբ կը ներկայացուին հայ աւետարանական խմբաւորումները Իս. Հայաստանի տարբեր վայրերուն մէջ, առաջնորդներն ու քարոզիչները, փորձերը՝ միանալու Ռուս Մկրտչական Եկեղեցիին և հոսկ՝ Իս. Հայաստանի իշխանութիւններուն քօղար-

կուած ապա և բացայայտ հալածանքները Հայ Աւետ. Եկեղեցիին դէմ 1927էն սկսեալ, երբ պետութիւնը չարտօնեց անոնց գործունէութիւնը:

Սամուէլ Պօղոսեանի «Լիբանանի ու Սուրիայի ազատագրումը թուրքերից 1918ին և Հայկական լեգէոնը» (42/2) յօդուածը նուիրուած է Հայկական լեգէոնի Լիբանան մուտքին՝ ըստ արխիւային նիւթերու, ականատես վկայութիւններու և յուշերու: Հեղինակը համառօտակի կը ներկայացնէ լեգէոնին ծնունդն ու ընթացքը և մարտերը՝ Պաղեստինի ճակատին վրայ՝ ընդգծելով որ ան առաջինն էր որ մուտք գործեց Պէյրութ: Հուսկ, հեղինակը կը մանրամասնէ լեգէոնին հիմնումին դրդապատճառներն և անոր վրայ դրուած յոյսերը որոնք ի դերն ելան ֆրանսական քաղաքականութեան պատճառով:

Պետրոս Թորոսեանի «Դրախտի որոնումը և հարստութեան փնտռումը. օսմանցի հայ պանդուխտներու տնտեսական դերը բրիտանական Եգիպտոսի մէջ (1882-1914)» (42/1) յօդուածին այս երկրորդ մասը կը հակադրուի այն օտար պատմաբաններուն որոնք կը նսեմացնեն հայոց դերն ու մասնակցութիւնը Եգիպտոսի տնտեսական վերելքին: Ոմանք, ինչպէս Լորտ Քրոմըր, գրած էր թէ «հայերը մեծամասնութեամբ խանութպաններ էին»: Հեղինակը լուսարձակի տակ կ'ատնէ հայ ներդրումը Եգիպտոսի լուսանկարչական և ծխախոտի արդիւնաբերութեան, ուր հայերը յաջողած էին գրեթէ մենաշնորհ հաստատել՝ հասնելով բարձր համբաւի տեղական և միջազգային շուկաներուն մէջ:

Յասմիկ Ամիրջանեանի «Հովուապետ-կաթողիկոս Ղուկաս Կարնեցոյ ընկերային-քաղաքական գործունէութիւնը (1780-1799)» (42/1) վերնագրեալ յօդուածը կը լուսաբանէ Էջմիածնի այս կաթողիկոսին գործունէութիւնը՝ իշխող պարսիկ խաներուն միջև եղած պայքարներուն լուծման խնդրով: Ուսումնասիրութիւնը կը պարզէ այն դերը որ կաթողիկոսը կը խաղար հաշտեցնելու խաները, կանխելու, շրջանցելու և յաթհադելու ներխանական պայքարներուն հետևանքները արևելահայութեան վրայ: Հեղինակը կը նշէ թէ յաճախ կաթողիկոսը կը ստիպուէր միջնորդելու, նուէրներով սիրաշահելու, միջամտելու կամ բանակցելու որպէսզի խնայէ կամ նուազեցնէ անխուսափելի աղէտները:

Հեղինէ Մկրտչեանի «Արցախի կուսանաց անապատները» (42/1) յօդուածը կ'արձանագրէ գոյութիւնը Արցախի կուսանաց 10 անապատներու, որոնք բաղկացուցիչը եղած են Արցախի հոգևոր-մշակութային կեանքին: Ասոնցմէ շատերը գործած են ԺԷ. դարուն, երբ այս մշակոյթը իր վերածնունդը կ'ապրի: Կը կարծուի որ ատկէ առաջ ևս գործած են նման անապատներ, թէև նիւթական փաստեր կը բացակային: Հեղինակը կ'ընդգծէ որ այս անապատները նաև մշակոյթի կեդրոններ էին, ուր ձեռագրեր ընդօրինակուած և մանրանկարուած են, ու կը վկայակոչէ Վարանդայի մէջ ԺԷ. դարուն ընդօրինակուած ձեռագիրը:

Ռուբէն Գասպարեան «Այրիվանքի տաճարի հարաւային պատի Իւանէ Ա. Զաքարեանի արձանագրութիւնը և յարակից հարցեր (ԺԳ. դար)» (42/1) ծաւալուն ուսումնասիրութեամբ կը լուսաբանէ ԺԳ. դարու ռազմաքաղաքական մեծ գործիչ Իւանէ Զաքարեանի գործունէութիւնը՝ մեկնելով անոր զինուորական գրաւումներէն՝ մանաւանդ Աղստի հովիտին մէջ: Ուսումնասիրութիւնը

խորհրդածութեան նիւթ կու տայ Զաքարեաններու ճկուն, իմաստուն և հեռա-տես քաղաքականութեան արնշութեամբ:

Գրականութեան բնագաւառին մէջ՝ «Գրական և տեսաբանական հա-յեացքների մեկնութեան փորձ. (Թումանեանի նամակների հետքերով)» (42/2) յօդուածով **Քնարիկ Արրահամեան** կը ներկայացնէ Թումանեանի նամակնե-րուն մէջ տեղ գտած՝ բանաստեղծին մտածումները գրականութեան, գրական արունստին, տարբեր սեռերուն և տեսութեան մասին: Կարգ մը պարագաներու հեղինակը Թումանեանի կարծիքները կը փաստագրէ Թումանեանի երկերէն մէջբերումներով:

Լուսինէ Հայրիեանի «Բանահիւսական տարրերը Մշոյ Գեղամի հեղի-նակային հեքիաթներում» (42/1) յօդուածը կը բացայայտէ Մշոյ Գեղամի հեղի-նակային հեքիաթներէն ոմանց մէջ դրսևորուող դիցաբանական, հեքիաթային, առասպելական և բանահիւսական տարրերը: Հեղինակը այս տարրերը կը նկատէ ԺԹ. դարավերջի հայ գեղջուկ մտադրոյթի արտացոլացում, ուր իրա-կանն ու բանահիւսականը միախառնուելով՝ յառաջացուցած են Մշոյ Գեղամի պատմուածքներու փունջերը:

Արիֆ Թափանի «Յովսէփ Մարուշի հայատառ թրքերէն *Պիր սէֆիլ զէվ-ճէ* (1868) վէպը՝ պատմողական մօտեցումով» (42/1) յօդուածը լուսարձակի տակ կ'առնէ օսմանեան հայատառ թրքերէն վէպերը, որոնք համապատասխան գնահատականի չեն արժանացած օսմանեան վիպագրութեան ուսումնասիրու-թեանց մէջ:

Վէպը հրատարակուած է Պոլիս՝ 1868ին, բայց չէ արժանացած համա-պատասխան հետազօտութեան: Ուսումնասիրութեան մէջ հեղինակը երկին կը մօտենայ պատմողական ելակէտերէ, կը քննարկէ պատմողները, լուսարձակի տակ կ'առնէ դիպաշարին դէպքերը, ժամանակը և տարածութիւնը:

Լեզուի բնագաւառին մէջ՝ **Արմենակ Եղիայեան** «Գոյականներու յոգ-նակին (յոգնակերտում)» (42/1) ուսումնասիրութեամբ մանրակրկիտ քննութեան կ'առնէ արևմտահայերէնի գոյականի յոգնակերտումը՝ նպատակ հետապնդե-լով կարելի կանոնակարգումի տանիլ այս ոլորտը: Հեղինակը գոյականները կը բաժնէ միավանկ ու բազմավանկ խումբերու, ապա կը քննէ բազմավանկ բառե-րուն կառոյցը՝ շեշտելով բարդ բառերու երկրորդ բաղադրիչին իւրայատկու-թիւնները, որոնց հիմամբ ալ կը կատարէ յոգնակերտումի իր կանոնակարգու-մը: Այդուհանդերձ, ան կը նշէ թէ կան խումբ մը բառեր որոնք ցարդ կանոնա-կարգուած չեն և չեն հետևիր յոգնակերտումի որոշ օրէնքի մը:

«Օտար յատուկ անունների տառադարձութեան սկզբունքները, Մասն Է.– ռուսերէն (համեմատութեամբ պատնական այլ լեզուների)» (42/2) վերնագ-րեալ յօդուածով **Արմէն Միքայէլեան** կը ներկայացնէ ռուսերէնէն հայերէն կա-տարուող տառադարձութեան սկզբունքները և կը ջանայ զանոնք համակար-գելով կանոնակարգել: Ուսումնասիրութիւնը հեղինակին հետևողական աշխա-տասիրութեամբ պատրաստուած հետազօտութեան երկար շարքին մէկ օղակն է, որ իվերջոյ պիտի յանգեցնէ իր առաջարկած տեսաբանական դրոյթներուն ամբողջական պատկերացումին:

Աշոտ Մկրեանի «Դերբայ. բաժ, թէ բառաձև» (42/2) հետազոտութիւնը նախ կը ներկայացնէ այս խնդրին առնչութեամբ հայ դասական լեզուաբաններու տեսակէտները՝ մատնանշելով որ կարծիքները յաճախ հակադիր եղած են և կարելի չէ եղած ընդհանրական տեսակէտ մը յառաջացնել: Հոսկ, հեղինակը հիմնուելով Ջահուկեանի այս առնչութեամբ կատարած դրոյթներուն վրայ՝ կ'առաջարկէ լիովին հրաժարիլ «դերբայական համակարգ» առանձնացնելու ասանդական մօտեցումէն:

Յակոբ Չոլաքեանի «Բարբառագիտութիւնը և Անտիոքի շրջանի հայերէն խօսուածքները» (42/1) յօդուածը քննարկման նիւթ կը դարձնէ վերոյիշեալ շրջանի խօսուածքներու ուսումնասիրութիւնը Հրաչեայ Աճառեանի, Արարատ Ղարիպեանի, Գեորգ Ջահուկեանի և այլոց կողմէ: Չոլաքեան կը մանրամասնէ թէ Ջահուկեան ասոնք կը գետնէլ երկու տարբեր բարբառախումբերու մէջ՝ Պէյլանի և Սուեթիա-Գեսապի՝ իբրև Կիլիկիոյ հարաւ-արևելեան ծայրամասի բարբառներ: Ան կը նշէ թէ ասոնցմէ Գեսապի և Սուեթիոյ խօսուածքները տակաւին կենդանի և գործածական կը մնան Գեսապի և Պէյրութի (Այնճար) մէջ:

Լալիկ Խաչատրեանի «Դերանուան թիւի քերականական կարգի տիպաբանութիւնը հին հայերէնում»ը (42/2) խորունկ ուսումնասիրութեան կ'ենթարկէ գրաբարի դերանուան թիւի քերականական կարգը և կ'եզրակացնէ թէ դերանուանական բառաձևերու արտայայտութեան մէջ կը գործէ մասնիկատրումը, տարահիմքութիւնը, տարարմատութիւնը, ինչպէս նաև քերականական իմաստներու արտայայտման խառն տիպը:

Տստեսագիտութեան բնագաւառին մէջ **Նորայր և Թաթուլ Մանասէրեաններու** «Հայկական գիւղը. Հայաստանի գիւղատնտեսութիւնը և հողային քաղաքականութեան արդի հիմնախնդիրները» (42/2) ուսումնասիրութիւնը կը քննարկէ ՀՀ հողային քաղաքականութիւնը՝ մանաւանդ երկրագործութեան բնագաւառին հանդէպ: Ուսումնասիրութիւնը կը քննարկէ գիւղացիին երկրագործութեան վատթար վիճակը և կը կատարէ շարք մը յանձնարարականներ, որոնք կը միտին գիւղացին հողին առաւել արմատաւորելու:

Տիգրան Էքմէքճիի «Էքմէքճի ընտանիքին ճարտարարուեստական հարիւրամեայ ընթացքը (Հալէպ-Պէյրութ, 1920-2016)» (42/1) փաստագրական վկայութեամբ հեղինակը, հիմնուելով Էքմէքճի ընտանիքին երկրորդ և երրորդ սերունդի յուշերուն, վկայութիւններուն, փաստաթուղթերուն, լուսանկարներուն վրայ, կը վերակառուցէ ընտանիքին ճարտարարուեստական հարիւրամեայ ընթացքը Հալէպի և Պէյրութի մէջ, որ սկիզբ կ'առնէ կտաւաներկումի ասպարէզին մէջ: Այա ան ծաւալելով կ'ունենայ վաճառման գրասենակ Պաղտատի մէջ և գործարան մը՝ Պէյրութ: Այս յաջողութեանց մէջ կարևոր դեր կը խաղան կրտսեակն հորագոյն մեքենաներու գնումն ու գործարաններուն արդիականացումը: Յօդուածը կ'աւարտի գործարանին փակումով՝ 2016ին, երբ այլևս անկարելի կ'ըլլայ անոր գոյատևումը, հակառակ բազմիցս կատարուած ճիգերու և զոհողութիւններու:

Գեորգ Ստեփանեանի «Արցախահայերը Բաքուի նաֆթարդինաբերութեան հիմնադիրներ և բարեգործներ (ԺԹ. դարի երկրորդ կէս-Ի.

դարասկիզը» (42/2) յօդուածը կը լուսաբանէ Պաքուի նաֆթարդիւնաբերութիւնը և տնտեսութեան ու քաղաքի ենթակառոյցներու զարգացման մէջ արցախահայերու դերը՝ մանաւանդ 1850-1910ականներուն: Յօդուածը կը թուէ անունները պաքուի նաֆթի հայ հսկաներուն և անոնց գործունէութիւնը ոչ միայն արտահանումին, այլև արտածումին մէջ՝ հաւաստելով թէ Պաքուի մէջ նաֆթարդիւնաբերութեան առաջին ամուր քայլերը առնուած են արցախահայերու կողմէ, և թէ այս խաւը նշանաւոր դարձաւ իր բարերարութիւններով ևս, որոնք դրսևորուեցան դպրոցներու, հիւանդանոցներու շինարարութեամբ և բարեսիրական նուիրատուութիւններով: Հեղինակը կ'անդադառնայ նաև պաքուի հայ նաֆթարդիւնաբերողներուն մայրամուտին և ատոր պատճառներուն:

Արուստ և Արիեստի մարզին մէջ՝ **Լևոն Լաճիկեանի** «Գիւմրի. դասական քաղաքի արդի մշակութային կեանքի ուրուագիծ» (42/2) յօդուածը քննարկման ու պատմողական վերլուծութեան նիւթ կը դարձնէ Գիւմրիի յետանկախական տարիներու մշակութային կեանքը իր այլազան երեսակներով: Ան կ'անդրադառնայ երկրաշարժին յաջորդած վերականգնողական ճիգերուն որոնք ընդգրկեցին մշակութային զանազան ոլորտներ՝ թատրոն, երաժշտութիւն, գեղանկարչութիւն, արհեստներ, թանգարաններ, և կ'եզրակացնէ թէ Գիւմրին յաջողած է կարևոր չափով պահպանել Արևմտահայաստանի, ինչպէս և Կարսի նշխարներու մնացորդացի աւանդապահն ըլլալու ինքնութիւնը:

Անդրանիկ Տազէսեան «Ակնարկ հայկական արձանագրութեամբ պղնձեայ թասերու վրայ» (42/1) նիւթով, հիմնուելով պղնձեայ թասերու 28 նմուշներուն վրայ, այս թասերը կը բաժնէ երեք խումբի ու լուսարձակի տակ կ'առնէ մէկ տեսակը՝ հաւաստելով որ անոնք տարածում գտած են ԺԹ. դարավերջին և Ի. դարասկիզբին: Հեղինակը կու տայ չափագրութիւնը այս թասերուն, կը բացայայտէ անոնց արտադրավայրերը, գործառոյթը, սեփականատէրերը՝ մեկնելով նմուշներուն վրայ եղած արձանագրութիւններէն:

Արփի Վարդումեանի «Կումիտասի և Տիգրան Զիթունու ստեղծագործական գործակցութիւնը» (42/1) յօդուածը խորհրդածութեան նիւթ է այս երկու մեծ դէմքերուն միջև եղած գործակցութեան տուած արդիւնքներուն առումով: Ուշագրաւ է թէ այս երկուքը կը յաջողին հանդիպիլ Էջմիածին և սահմանափակ ժամանակի ու պայմաններու մէջ Կումիտաս կը յաջողի արձանագրել Վանի ազգագրական երաժշտական գոհարներ՝ երգեր, մեղեդիներ, մանկական երգեր ևն՝ Զիթունիի կատարմամբ: Այս երգերէն ոմանք կը դառնան Կումիտասի երգչախմբային երգացանկին մէկ մասը:

Հայարփի Յակոբեանի «Յարուցեալ Մովսէսը Քրիստոսի աստուածայայտութեան վկայ՝ ըստ պայծառակերպութեան և երկրորդ գալստեան հայկական միքանի մանրանկարների» (42/1) ուսումնասիրութիւնը լուսարձակի տակ կ'առնէ այս նիւթով ուսումնասիրութիւններէ դուրս մնացած կամ անցողակի յիշատակուած ձեռագրերու խումբ մը: Հեղինակը խորագին պրպտումներով կը հետևցնէ թէ այս խումբը պէտք է ունեցած ըլլայ իր նախատիպը որ կու գայ Ժ. դարէն: Ան կը նշէ թէ այս նախատիպին նմանակն ու զարգացումները կարելի է տեսնել ԺԶ. դարու յոյն և ռուսական մանրանկարչութեան մէջ: Այս տուեալին

լոյսին տակ՝ հեղինակը կ'առաջադրէ վերատեսութեան ենթարկել առկայ տեսակէտները այս առնչութեամբ և վերամշակել՝ ըստ նոր յայտնութիւններու:

Զաւէն Կնեսազեան «Հին հայ մատենագրութեան «փող» և «պատերազմական փող» նուագարանները» (42/2) յօդուածով քննարկումի նիւթ կը դարձնէ հայ փչողական գործիքները ու մատենագրական ծաւալուն հետազոտութիւններէ ետք կ'եզրակացնէ թէ պատերազմական փողը յատուկ գործիք մըն էր, սակայն նաև ունէր հաւաքական՝ շուրջ տասը գործիքներու իմաստ, և թէ 'փող'ը կրճատեալ տարբերակն է պատերազմական փողին ու շարք մը փչողական գործիքներու, իսկ երբեմն՝ փողը կը նշանակէ հովիւին փչողական գործիքը, մինչ Եղեռնէն առաջ Վանի, Սասնոյ ու Տարօնի մէջ կը գործածուէր հովիւի փող արտայայտութիւնը:

Արթո Թաւութեանի «Հայերը և գորգագործութիւնը Օսմանեան կայսրութեան մէջ, 1890–1910ականներուն» (42/2) յօդուածը կը զարգացնէ փրոֆեսոր Եաշար Թոլկա Քորայի («The Market as a Means of Post-Violence Recovery: Armenians and Oriental Carpets in the Late Ottoman Empire (c.1890s–1910s)») յօդուածը և կը հարստացնէ զայն նոր աղբիւրներով, փաստարկներով ու երեսակներով:

Քորա կը հաւաստէ թէ նիւթապէս խոցելի և խեղճ հաւաքականութիւններու համար գորգագործութիւնը էական աղբիւր եղած է եկամուտի և տնտեսական վերականգնումի: Ան կը բերէ օրինակը մանաւանդ համիտեան ջարդերու հետևանքով արևմտահայ ընտանիքներու տնտեսական խղճալի վիճակին, երբ այրերը՝ եկամտաբեր անձերը, սպանուած էին, ու ընտանիքը զրկուած՝ նիւթական աղբիւրէ, մատնուած անճարութեան: Այս պայմաններուն մէջ միսիոնարները օժանդակեցին այրի հայ ընտանիքներուն որ լծուին գորգագործութեան, որով ալ Օսմանեան կայսրութեան գորգագործական հակակշիռն ու ծանրութիւնը անցան արևմտեան միքսաի նահանգներէ արևելեան նահանգներ, մանաւանդ՝ հայկական վեց վիլայէթներ ու Կիլիկիա: Թաւութեան կը բերէ յաւելեալ ապացոյցներ Արշակ Ալպոյաճեանի և այլոց աշխատասիրութիւններէն: Միւս կողմէն, բացատրելով թէ օտար մարդուն արգիլուած էր թուրք տուն մտնել և շփուիլ թուրք կնոջ հետ, հեղինակը կը պնդէ թէ թուրք կինը չէր կրնար գորգ գործել, մինչ հայ կինը չունէր գորգագործութեան խնդրով օտար մարդ ընդունելու արգելքը: Ուսումնասիրութիւնը յաւելեալ թափ կու տայ մանաւանդ վերջին տասնամեակներուն 'օսմանեան' գորգերը 'թրքականացնելու' հակազիտական համակարգուած ճիգերու հերքումին:

Թաւութեանի երկրորդ յօդուածը՝ «Հայկական աղօթագորգերու պարագան» (42/1), հարցականի տակ կ'առնէ աղօթագորգերու իսլամական-թրքական ծագման վարկածը: Հեղինակը, հակադրուելով գիտական շրջանառութեան դրուած տեսակէտներու, որոնք աղօթագորգը թրքական-իսլամական կը նկատեն, կ'ընդգծէ անոնց կողմնակալութիւնը երբ ամբողջութեամբ կ'անտեսուին գոյութիւնը հայկական աղօթագորգին ու անոր առանձնայատկութիւններուն: Ան կը վկայակոչէ պատմիչներ և այլ վաւերական տուեալներ, կը բերէ հայկական արձանագրութեամբ հայկական հնագոյն աղօթագորգեր, հայկական մանրանկարներ, ցոյց կու տայ հայկական գորգերու յատկազօծումի աղբիւրներ

և այս ապացոյցներու հիմամբ կը հերքէ աղօթագորգերու լոկ թրքական-իւլա-մական ըլլալու փաստը ու ամբօրէն կը տեղադրէ հայկական աղօթագորգերը համաշխարհային քարտէսին վրայ:

Ընկերաբանութեան ոլորտին մէջ՝ **Կարէն Մկրտչեան** «Համավարակը և հանրային կառավարման խնդիրը Այսրկովկասում» (42/1) յօդուածով լուսարձակ կը բնեռէ համաճարակի հետևանքով բացայայտուած ընկերաբանական շարք մը երևոյթներու վրայ: Հեղինակը կը կատարէ վերլուծական պատումը Քովիտի դէմ իշխանութեանց որդեգրած հանրային քաղաքականութեան՝ Այսրկովկասի երեք պետութիւններուն մէջ, և թէ ինչ հետևանքներ ունեցաւ համաճարակը՝ տնտեսութեան, կրթութեան և այլ մարգերուն ու ընդհարնապէս մարդկային հոգեբանութեան վրայ:

Սևանա Թովպեանի «Լիբանահայերու հաւաքական և անհատական ինքնահաստատումը միջոց՝ նուազեցնելու ինքնապաշտպանական վերաբերմունքը և դիրացնելու յարաբերութիւնը այլ խումբերու անդամներու հետ» (42/2) հոգեբանական նիւթը, դիտարկելով լիբանահայ վարժարաններու աշակերտները, ուսումնասիրութեան առարկայ կը դարձնէ անոնց՝ ոչ-հայերու հետ հաղորդակցութիւնը, երբ անոնք ա) հաւաքական և անհատական ինքնութեանական հաստատում կատարած են կամ չեն կատարած և՛ բ) ինքնութեանական սպառնալիքի ենթակայ են կամ չեն:

Ուսումնասիրութիւնը քննութեան կ'առնէ նաև ոչ-հայ մօր/հօր զաւակ, իգական կամ արական, ընկերային-միութեանական-սկաւառական շարժումներու անդամ ըլլալու/չըլլալու գործօններու տարբերակուած ազդեցութիւնը՝ կատարուած փորձագիտական հետազօտութեան վրայ:

Սօնա Ներսիսեանի «Հայրենիքի վերստեղծումը Սփիւռքում. Լոս-Անճելըսի հայ համայնքի օրինակը» (42/2) ուսումնասիրութիւնը դաշտային քննարկումի նիւթ կը դարձնէ սովետահայերու հայրենիքը վերակերտելու երևոյթները իրենց նոր բնակավայր Լոս-Անճելըսի մէջ՝ ընկերային հասարակաց տարածքներ ու միջավայր յառաջացնելով, վերականգնելով անցեալի խորհրդանիշներ: Հեղինակը կը քննարկէ թէ ինչպէս և ինչու ծննդավայր-հայրենիք վերակերտելու կարիքը կը յառաջանայ նոր միջավայրին մէջ՝ նշելով թէ ասիկա արդիւնք է ընկերամշակութային սնուցման աղբիւր գտնելու կարիքին: Հոսկ հարցախոյզի միջոցով հեղինակը կը ջանայ զատորոշել այն գլխաւոր գործօնները որոնք կը ծառայեն ծննդավայր-հայրենիքի վերստեղծման՝ արտասահմանի մէջ:

Սարգիս Պետրոսեան, «Հնագոյն Բզնունիքի արտօնեալ դասերի և պաշտամունքի մասին» (42/1) յօդուածին մէջ քննութեան նիւթ դարձնելով Հայկական լեռնաշխարհի հիթիթեան արձանագրութիւնները՝ կ'առանձնացնէ անոնց կրօնական և պետական կազմաւորման տուեալները: Արդարև, հիթիթները արշաւելով Հայկական լեռնաշխարհի հասած են մինչև Բզնունիք ու թողած արձանագրութիւններ, որոնց շնորհիւ կը պարզօրին շրջանի ռազմական ճանապարհները, տեղական ցեղերու խմբաւորումները, բնակավայրերը: Հեղինակը կը հաւաստէ թէ կրօնական վայրերը պաշտամունքային հաւաքական կեդրոններ էին, ուր տակաւ կը կեդրոնացուին չաստուածները, մանաւանդ հնդկրոպա-

կան գլխաւոր գոյգը՝ որոտի չաստուած Հաստուան և արևի չաստուած Հախան՝ առաջինը համարուելով զինուոր-թագաւորին, իսկ երկրորդը՝ կրօնաւոր թագաւորին չաստուածը: Հեղինակը կը զարգացնէ այն տեսակէտը թէ չաստուածներուն կեդրոնացումը նաև արդիւնքն էր տեղաբնիկ ցեղերուն ցեղակցութեան ու շահերու նոյնացման: Այս գործօններուն հիմամբ ալ կը յառաջանան ցեղային միացումները, որոնք կորիզը կը գոյացնեն յետագային յառաջանալիք Հայկական լեռնաշխարհի պետութեան:

Բանահիսութիւն-ազգագրութիւն բնագաւառին կ'առնչուին «Յետ-Եղեռնեան ժողովրդային միքանի ստեղծագործութիւն, Լիբանանէն՝ Ա.- Փոնջ մը յօրինուած բանաստեղծութիւն Վահան Ա. քնյ. Քենտիրճեանէն, Բ.- Ալեք-սանտրէթի Սանճաքէն հայկական ելիցին նուիրուած *լետթան*» (42/1) վերնագրեալ նիւթերը, որոնցմէ առաջինը կ'արտացոլացնէ 1940ականներու լիբանահայ տրամադրութիւններ հայրենիքին, հողին, անցեալին, կրօնքին և մշակոյթին մասին, իսկ երկրորդը ճաշակ մըն է այն ապրումներէն զորս ունեցան Ալեք-սանտրէթի սանճաքէն վտարանդի հայերը՝ հաստատուելով Լիբանան:

Մերի Աւետիսեանի «Հայոց ազգագրութեան թանգարանի Սիւնիքի սպասքի հաւաքածոյի տիպաբանական բնութագիր (ակնարկ)»ը (42/2) կը լուսաբանէ Սիւնիքի սպասքի կարևոր դերը ընտանիքի կենցաղի կազմակերպման մէջ: Հեղինակը կը հաւաստէ թէ սպասքի կարգ մը իրերու դերը այնքան կարևորուած էր, որ ժամանակի ընթացքին ընկերութիւնը անոնց տուաւ ծիսական դեր, իսկ ոմանք վերափոխուեցան սրբացում սովորոյթներու: Հեղինակը կը նշէ թէ այս իրերէն ոմանք վերջին տասնամեակներուն գեղագիտական ձևափոխութեան ենթարկուելով դարձած են յարդարանքային նմուշներ, մինչ ուրիշներ յատուկ ճաշակ մը կ'աւելցնեն ճաշարաններու մէջ գործածութեան ընթացքին:

Յակոբ Զոյաքեանի «Սուրիոյ հիւսիս-արևմտեան շրջաններու բնիկ հայոց ուխտավայրերը» (42/2) տեղագրական-նկարագրական յօդուածը կը ներկայացնէ Պէյլանի, Մուսա Լեռան, Գեսապի, Բուճի Հովիտի և շրջակայից հայկական ուխտավայրերը: Հեղինակը զանոնք կը դասէ երեք խումբերու, կը նշէ թէ ըստ ժողովրդական հաւատալիքներու՝ այս ուխտավայրերը ունին իրենց պահապան սուրբերը: Այդուհանդերձ կան ոմանք կը հաւատան թէ երկու պահապաններ՝ Կիշիցիկ պապուկ և Արվանտ, որոնք կը պահպանեն ասոնց մէջ/մօտ գտնուող գանձը: Հեղինակը կ'աւելցնէ թէ երեք տեսակի ուխտագնացութիւն կը կատարուէր այս ուխտավայրերուն Հայ Առաքելական Եկեղեցիին հովանաւորութեամբ, և կը ներառէր ոչխարի զենում, պատարագ, հերիսայի պատրաստում և ժողովրդական տօնակատարում:

Լուսինէ Ղուէջեանի «Ժողովրդական ասոյթաբանութեան դրսևորումները Յովհաննէս Թումանեանի գրական ժառանգութեան մէջ» (42/1) նիւթը ընթերցողին կը հրամցնէ Թումանեանի ստեղծագործութեան մէջ աղօթքի, անէծքի, երգումի, օրհնանքի ձևով տեղ գտած ասոյթները: Հեղինակը կը ջանայ այսպիսով բացայայտել Թումանեանի ժողովրդական մտադրոյթի երեսակներ և թէ ինչպէս կը վերաբերէր Թումանեան բանահիսական նման նիւթերուն ու օգտագործելով զանոնք՝ կը զարգացնէր իր գրականութիւնը, որով և այդ

գրականությունը զգեցաւ առաւել խորութիւն, բազմաշերտութիւն, թարմութիւն և հասունութեան այլ որակներ:

Շուշանիկ Արքահամեանի «Տօնածիսական շրջայց-խաղերի գաղափարական հիմքն ու ընդհանրությունները» (42/2) յօդուածը կը կատարէ բաղդատականը այս խաղերուն՝ հաւաստելով որ անոնք մէկ ամբողջութիւն կը գոյացնեն և կը լրացնեն տարբեր տօներու ծիսական կատարումները՝ ազգագրական և բանահիւսական դրսևորումներով: Հակառակ անոր որ առաջին հայեացքով անոնք կրնան տարբերիլ իրարմէ իրենց կատարմամբ թէ մանրամասնութիւններով, սակայն գաղափարական և կառուցային ու իմաստաբանական նմանութիւնները կը հաւաստեն որ անոնք ունին նոյնանման գաղափարական առանցք և հիմնուած են նախնական որոշ ծիսակատարումներու վրայ:

Յասմիկ Գալստեանի «Զրի ոգիների տիպաբանական և գործառնութային քննութիւն (ըստ հայ ժողովրդական զրոյցների)» (42/2) յօդուածը կը խօսի հայկական դիցաբանութեան ստորջրեայ յուշկապարիկներու մասին և անոնց զուգահեռները կը մատնանշէ այլ ժողովուրդներու մօտ: Ասոնց թիւը շատ չէ, իսկ ասոնց մասին առաջին գրառումները - կատարուած 1850ականներուն - ունին Աստուածաշունչն ու Ե. դարու հայ մատենագրութիւնը իբրև հնագոյն երկեր: Հայ դիցաբանութեան մէջ ասոնք երկակենցաղ են, երբեմն կը նկատուին տգեղ ու չար (և նպատակ ունին վնասելու մարդոց և փոքրերու), իսկ այլ պարագաներու՝ իբրև գեղեցիկ ջրահարսեր (որոնք կը հրապուրեն այրերը և կը բազմացնեն իրենց տեսակը): Այս պատումները կը նկարագրեն ջուրի ոգիները իբրև կապուտաչեայ անզուգական գեղեցկութիւններ՝ դեղին մազերով:

Տորք Դալալեանի «Պատմագրական-բանահիւսական պատումները Յովհան Օճնեցի կաթողիկոսի մասին (աղբիւրագիտական ուսումնասիրութիւն)» (42/1) նիւթը կը համատեղէ Ժ. դարէն սկսեալ հայ մատենագիրներու (Յովհաննէս Դրասխանակերտցի, Կիրակոս Գանձակեցի, Վարդան Արևելցի), երկրներուն մէջ երևցող և Յովհան կաթողիկոս Օճնեցիին վերաբերող տուեալները, որոնց կեդրոնական նիւթը Օճնեցիի հանդիպումն է արաբ խալիֆային, ուր և կը բացայայտուի կաթողիկոսին վարչաքաղաքական հմտութիւնն ու գործունէութիւնը: Այս դրուագը ներկայացուած է դիցական ոճով, իսկ յետագային՝ ուսումնասիրուած դասական թէ ժամանակակից բանասէրներու կողմէ: Հեղինակը կը վերլուծէ Օճնեցիի կերպարին վիպականացումը, որ հիմնուած է անոր բնականոն կեանքի պատումին վրայ:

Եկեղեցի, կրօնք, փիլիսոփայութիւն բնագաւառին մէջ՝ Ճան Էրզրում-լուօղլուին «Գալուստ Կոստանդեանի դրապաշտ աշխարհայեացքը և դերը օսմանեան փիլիսոփայութեան պատմութեան մէջ» (42/1) նիւթը կը լեցնէ կարևոր բացթողում մը՝ օսմանեան փիլիսոփայութեան պատմութեան կալուածին մէջ: Դրապաշտ իմացականութիւնը որոշ հոդ գտաւ ԺԹ. բ. դարակէսի արևմտահայ մտաւորական խաւին մէջ: Հեղինակը կը բացատրէ այս դպրոցին բնոյթը և անոր տարածման տուն տուող պատճառները, կը ծանրանայ Կոստանդեանի *Մէթոյրին վրայ* գիրքին և կը կատարէ պատումը այս գիրքին շուրջ ծաւալած քննարկումներուն, կեցուածքներուն: Հեղինակը այս նիւթով կը ջանայ Կոստան-

դեանը տեղաւորել օսմանեան փիլիսոփայութեան պատմութեան մէջ և արժանին մատուցել իրեն իբրև այդպիսին: Հեղինակին երկրորդ յօդուածը՝ «Իրապաշտ գաղափարները Գրիգոր Մսերեանի *Մէտփոքա* հանդէսին մէջ» (42/2), կը նկարագրէ դրապաշտ փիլիսոփայութեան մուտքը արևմտահայ միջավայր, մանաւանդ՝ Պոլիս, ուր Տեմիրճիպաշեան և Կոստանդեան պաշտպանեցին գիտութիւնը կրօնին դէմ՝ հաւատալով որ ընկերութիւնը կրնայ զարգանալ միայն գիտութեամբ: Ներկայացնելով պոլսահայ դրապաշտ շարժումի բահվիրաները՝ հեղինակը այդ յենքին վրայ կ'առանձնացնէ Մսէր Մսերեանցի *Մէտփոքա* հանդէսը, կը վերլուծէ անոր բովանդակութիւնը ու զայն կ'արժեւորէ իբրև սատարող դրապաշտ իմացականութեան տարածման՝ արևմտահայ իրականութեան մէջ:

Քննարկումներ բաժնով **Մարիամ Մարգարեան** և **Գարիկ Պողոսեան** կը ներկայացնեն տեսաբանական նիւթ մը՝ «Հայկական քաղաքակրթութիւնը մերձարևելեան արդի քաղաքական զարգացման ենթախորքում» (42/1) վերնագրին տակ: Արևելեան և Արևմտեան մշակոյթներու բախման ենթախորքին վրայ՝ հեղինակները կ'առաջադրեն կարևորութիւնը հայ քաղաքակրթութեան վերաներկայացման՝ իբրև միջինարևելեան քաղաքակրթութիւն: Անոնք այս քաղաքակրթութեան մատուցման համար կ'առաջարկեն հայկական կրթական ամբիոնի մը յառաջացումը և կը տեսաբանեն համապատասխան շարք մը խնդիրներ՝ քննարկելով զանոնք անցեալի, ներկայի և ապագայի ելակէտերէ:

Գայիանէ Յակոբեանի «Կրթութեան դերը հայաստանաբնակ սուրիահայերի համարկման գործընթացում» (42/2) ուսումնասիրութիւնը լուսարձակի տակ կ'առնէ ՀՀ հաստատուած սուրիահայերու աղընչութեամբ կրթական համակարգին մէջ դիմագրաւած դժուարութիւնները, որոնք կը վերաբերին լեզուի ուսուցման (արաբերէն-հայերէն), հաղորդակցութեան (արևմտահայերէն-արեւելահայերէն) և կրթաուսումնական ծրագրին: Հեղինակը կ'ընդգծէ թէ հաղորդակցական հարցերը լուծուած ըլլալով հանդերձ՝ սուրիահայերու կրթաուսումնական խնդիրները կը մնան անլոյծ:

Եղիա Թաշճեանի «Իրանի հարկաւորող արտաքին քաղաքականութիւնը Հարաւային Կովկասի մէջ» (42/1) ուսումնասիրութիւնը կը քննարկէ Հարաւային Կովկասի մէջ Իրանի արտաքին քաղաքականութեան արձանագրած որոշակի շրջադարձը: Ըստ հեղինակին՝ Թուրքիոյ աջակցութեամբ Արցախի դէմ սանձազերծուած Ազրայէճանի 44օրեայ պատերազմին հետևանքով վերահաստատուեցան Թուրքիոյ ախորժակները դէպի Կեդրոնական Ասիա: Եւ քանի որ նման ծրագիր մը Իրանը կը դնէ թրքական աւագանին մէջ, Իրան շրջադարձ մը կատարեց իր հիւսիսին հանդէպ վարած արտաքին քաղաքականութեան մէջ: Հեղինակը շարք մը յառաջադրանք-առաջարկներ կը ներկայացնէ որոնք կրնան յաւելեալ գործակցութեան միջոցներ հանդիսանալ՝ Հայաստանի և Իրանի համար, կ'ամրապնդեն փոխյարաբերութիւնը, կը սատարեն շրջանի խաղաղութեան և կը խոչընդոտեն օտար միջամտութիւնները:

Տիրուհի Սիրեկանեան «Միքայէլ վրդ. Չամչեանի *Քերականութիւն հայկազեան լեզուի* գրքի Թիֆլիսի Ներսիսեան հոգևոր դպրոցի տպագրութիւնը» (42/2) յօդուածով կը բաղդատէ գիրքին տարբեր անուանաթերթերը և

կ'եզրակացնէ թէ Վենետիկի մէջ 1779ին հրատարակուած այս գիրքը 1826ին Թիֆլիսի մէջ ունեցած է միակ տպագրութիւն մը, թէև անոր անուանաթերթը փոխուած է ըստ նուիրատուին և գիրքին ուղարկուելիք հասցէներուն:

Հրապարակումներ բաժնով **Վաչէ Ղազարեան** կը ներկայացնէ «Պատառիկներ Վահան Թէքէեանի սաղիմական առաքելութենէն» (42/1) նիւթը, ուր արխիւային ծալքերով կ'արծարծուի 1914ին Թէքէեանի վստահուած առաքելութիւնը՝ քննելու տասնամեակէ մը ի վեր Երուսաղէմի հայոց պատրիարքարանին մէջ պատահած տնտեսական անկանոնութիւնները: Սակայն ի դիմաց Օրմանեանի չգործակցող այլ նոյնիսկ խոչընդոտող ընթացքին՝ Թէքէեան կը տեղեկագրէ Պոլիս և Եգիպտոսի մէջ միառժամանակ սպասելէ ետք կը ներկայացնէ հրաժարականը՝ այս առաքելութենէն:

Եղիկ Ճերէճեան «Նորայայտ նամակ Փարամագին՝ Սապահ-Գիւլեանէն» (42/1) փաստաթուղթով կը պատմէ թէ ինչպէս ՄԴՀԿը յանգեցաւ Երիտթորք եռեակը (Էնվէր, Թալաաթ, Ճեմալ) սպանելու որոշումին: Յօդուածը կը մանրամասնէ սպանութեան ծրագիրը և այս ծիրին մէջ սերտ գործակցութիւնը՝ Իթիլաֆ կուսակցութեան հետ՝ մեկնելով Սապահ Գիւլեանի նամակէն:

Միհրան Մինասեան «Անտիպ տեղեկագիր մը Տարսոնի մասին (1898)» (42/1) անտիպ տեղեկագրով կը ներկայացնէ Տարսոնի մասին կարևոր տուեալներ, որոնք կը վերաբերին քաղաքին բնակչութեան, դպրոցներուն, կրօնական հաստատութիւններուն, գործարաններուն, հնութիւններուն, ընկերային կեանքին ևն: Տեղեկագիրը մասամբ կը փոխարինէ այն խոշոր բացը որ կայ ի բացակայութեան Տարսոնի հայութեան նուիրում ուսումնասիրութեան: Հեղինակին երկրորդ հրապարակումը՝ «Վիճակագրական անտիպ տեղեկագիր Ատափագարի և մօտակայ հայաբնակ երեք գիւղերու մասին (1871)» (42/2), կը ներկայացնէ Ատափագարի հայաբնակ չորս թաղամասերու, ինչպէս և կից երեք գիւղերուն հայկական եկեղեցիները, կրօնատրոնները, արական և իգական դպրոցները, հայ յարանուանութեանց թիւերը, եկեղեցիներուն տնտեսական վիճակը: Կը ներկայացնէ նաև հայաբնակ գիւղերուն տնտեսական դժուար վիճակը, պետութեան կողմէ հայոց հողերուն անյատոյց յափշտակումը յօգուտ գաղթական չերքէզներու: Տեղեկագիրը առաւել արժէքատու կը դառնայ, քանի որ շրջանի հայութեան մասին սակաւ տուեալներ կան այդ թուականէն:

Հայկ Աւագեան «Տիգրան Զէյթունցեանի, Արշակ Զօպանեանի, Արմենակ Շահմուրատեանի, Աշոտ Պատմագրեանի և Արսէն Երկաթի անտիպ նամակները Ղազարոս Ղազարոսեանին» (42/2) վերնագրին տակ կը հրապարակէ ութ անտիպ նամակներ, որոնք կ'առնչուին չորս տասնամեակ եգիպտահայ երաժշտութեան ծառայած Ղազարոս Ղազարոսեանին, ինչպէս նաև նամակագիրներուն 1920ականներու կեանքին:

Մարէք Եանտաթի «Լիբանահայ գաղթականները 1922ի աշնան. չէխ ճանապարհորդ Քարէլ Հանսայի վկայութիւնները» (42/2) նիւթը կ'առնչուի 1920ականներու սկիզբին Պէյրութ եկած՝ Հանսայի ականատեսի վկայութեան՝ շուրջ 10.000 որբերու փոխադրութեան՝ Ճարապլուսէն Հալէպ և անկէ՝ Պէյրութ: Հանսա, որոշելով օգնել հայ գաղթականներուն, Չէխիոյ մէջ 1923ին կը հրատա-

րակէ երկու գիրք, ուր լուսարձակի տակ կ'առնէ 1922ի հայ գաղթականութեան վիճակը՝ Հալէպի և Պէյրութի գաղթակայաններուն մէջ, հայ որբերուն կացութիւնը ևն:

Այստեղ հրատարակուող նկարագրութիւնները քաղուած են Հանսայի այդ գոյգ գիրքերէն: Անոնք հազուադիւտ վկայութիւններ են Լիբանանի մէջ գաղթական հայութեան դիմագրաւած դժուարութիւններուն, գաղթակայաններու կեանքին և որբանոցայիններուն իրավիճակին:

Հաղորդումներ բաժնով **Անդրանիկ Տազէսեան** «Հայկական պղնձեղէնի Սարգիս Զամպաքճեանի հաւաքածոն» (42/2) տեղեկատուական նիւթով կը ներկայացնէ 50 նմուշ ընդգրկող այս հաւաքածոն, կու տայ կնիքներուն լուսանկարները, միքանի ուշագրաւ նմուշներու նկարները, ապա և չափագրութիւնը իւրաքանչիւրին:

Արտակ Ասատրեան «Հայոց ազգագրութեան թանգարանի քարտէզների հաւաքածոն» (42/2) տեղեկատուական յօդուածով կը ներկայացնէ յունահայ Յակոբ Զելալեանի՝ Սարդարապատի ազգագրութեան թանգարանին նուիրաբերած քարտէսախումբը, նկարագրելով անոնց 27ը, որոնք կ'առնչուին հայոց պատմութեան ու Հայկական լեռնաշխարհին: Այս քարտէսները տպուած են Ֆրանսայի, Բրիտանիոյ և Հոլանտայի մէջ՝ ԺԷ.-ԺԹ. դարերուն: Հեղինակը գանոնք կը դասէ չորս խումբերու՝ Մեծ Հայքի, Փոքր Ասիոյ, ռուս-պարսկական և ռուս-օսմանեան պատերազմներու և աստուածաշնչական քարտէսներ:

Արծուի Բախչինեանի «Ճոն Ափտայքը (1932–2009) և հայերը» (42/2) նիւթը կը համատեղէ ամերիկացի գրողին առնչութիւնները հայութեան: Տեղեկատուութիւնը կը մանրամասնէ անոր այցելութիւնը Հայաստան և հանդիպումները ականաւոր հայ դէմքերու հետ:

Արման Մալոյեանի «Հայաստանի Հանրապետութեան Վայոց-ձորի մարզի նորակառոյց եկեղեցիները (2000–21)» (42/2) տեղեկատուական յօդուածը մաս կը կազմէ հեղինակին յօդուածաշարքին՝ նուիրուած եկեղեցաշինութեան՝ Հայաստանի Գ. Հանրապետութեան շրջանին: Ան կը նկարագրէ Վայքի, Մալիշկայի, Աղանաձորի, Մարտիրոսի, Գնդեազի, Ելփինի, Կեչուտի, Ջերմուկի և Ռինտի մէջ կառուցուած եկեղեցիները, կը մանրամասնէ անոնց ճարտարապետական յատկանիշներն ու կը պատմէ անոնց հիմնումի և նաւակաւորքի մանրամասնութիւնները:

Հանդէսին հետաքրքրական նորութիւններէն են՝ երկրորդ գիրքին մէջ տեղ գտած հարցումները՝ ուղղուած հայ չորս լեզուագէտներու՝ Եւրի Աւետիսեանի, Արմենակ Եղիայեանի, Յակոբ Կիլլիւճեանի և Յակոբ Չոլաքեանի: Հարցումները կը վերաբերին արևմտահայերէնի և արևելալահայերէնի մերձեցման հարցերուն:

Հանդէսի երկրորդ գիրքը ունի միակ **գրախօսական** մը՝ գրուած Անի Ֆիշենկճեանի կողմէ և նուիրուած Սեդա Տ. Օհանեանի *Միջագետք (Իրաք)ի հայ գաղթօճախը վաղնջական ժամանակներէն մինչև XX դար* գիրքին (42/2):

Հանդէսի երկրորդ գիրքը ունի **մահագրականներու** երկար շարք մը՝ նուիրուած 2021ին մեզմէ մեկնած գիտնականներու, որոնք հայագիտութեան

ծառայած են.- Շահէն Խաչատրեան (1934-2021), Աշոտ Աբրահամեան (1954-2021), Ֆրինա Բաբայեան (1935-2021), Գրիգոր Բրուտեան (1955-2021), Վլադիմիր Գրիգորեանց (1946-2021), Մարգարիտա Դարբինեան-Մելիքեան (1920-2021), Վլադիմիր Զախարով (1946-2021), Ալեքսանդր Թովչեան (1939-2021), Ստեփան Թովչեան (1937-2021), Վարդան Խաչատրեան (1932-2021), Վլադիմիր Կիրակոսեան (1936-2021), Գեորգի Կուրատեան (1946-2021), Ռոլֆ Հոսֆելտն (1948-2021), Վարդան Դազարեան (1958-2021), Արշակ Մադոյեան (1938-2021), Հայրապետ Մարգարեան (1950-2021), Բոնըլտ Մարշէզ (1947-2021), Մորենս Մորանի (1947-2021), Լիանա Յովսէփեան (1941-2021), Մուշեղ Յովսէփեան (1961-2021), Ռինա Շալունց (1937-2021), Ճորճ Պոտոնուքեան (1943-2021), Էդուարդ Պողոսեան (1954-2020), Հենրիկ Սվազեան (1938-2021), Քնարիկ Տէր Դաւթեան (1926-2021), Կարպիս Տէր Եղիայեան (1949-2021), Լիսի Տէր Մանուէլեան (1928-2021), Արմէն Տէր Ստեփանեան (1946-2021) և Գասպար Տէրտէրեան (1934-2021):

Հանդէսի երկրորդ գիրքը կը փակուի «Յիշատակարան»ով մը, ուր խմբագրակազմը համառօտակի կը ներկայացնէ համաշխարհային շրջանային և հայկական այն իրավիճակը որուն շրջանին ծնան այս զոյգ գիրքերը:

Ներկայացվել է՝ 05.02.2024

գրախոսվել է՝ 09.07.2024

ընդունվել է տպագրության՝ 30.09.2024

ՅԵՂԻՆԱԿՆԵՐ

Աբրահամյան Հասմիկ Արելի

սլավոնական գիրությունների թեկնածու

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի գիտաշխատող
hasmikabrahamyanihasc@gmail.com

Աթանեսյան Գարիկ Հրահատի

սլավոնական գիրությունների թեկնածու

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի գիտաշխատող
atanesyangarik@gmail.com

Անգելուշ Լուսինե Միքայելի

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի ավագ լաբորանտ

lusineangelush@gmail.com

Ասատրյան Հռիփսիմե Գարիկի

սլավոնական գիրությունների թեկնածու

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Բանագիտության բաժնի գիտաշխատող
hripetnos@mail.ru

Բարսեղյան Սյուզաննա Սոսի

սլավոնական գիրությունների թեկնածու

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի ուսումնասիրության բաժնի ավագ գիտաշխատող
syuzanna.barseghyan@gmail.com

Գալստյան Միհրան Վարդգեսի

սլավոնական գիրությունների դոկտոր, դոցենտ

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի վարիչ, առաջատար գիտաշխատող
akoonk@yahoo.com

Գալստյան Նարե Միհրանի

Սոցիոլոգիական գիրությունների թեկնածու

ԱՄՆ Սիրակուզայի համալսարանի Բերթոն Բլատի ինստիտուտի ավագ հետազոտող
nare.galstyan@gmail.com

Խաչատրյան Նելլի Ռաֆիկի

սլավոնական գիրությունների թեկնածու

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի ուսումնասիրության բաժնի գիտաշխատող
nelli.khachaturyan02@gmail.com

Կարապետյան Ռուբեն Սուրենի*պատմական գիտությունների դոկտոր*

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի
ուսումնասիրության բաժնի վարիչ, առաջատար գիտաշխատող
karapetyan.ruben.s@gmail.com

Հակոբյան Գայանե Լևոնի*պատմական գիտությունների թեկնածու*

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական
գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի գիտաշխատող
gayik20@gmail.com

Հարությունյան Մարիամ Բագրատի

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի
ուսումնասիրության բաժնի ավագ լաբորանտ
mariam-harutyunyan-00@mail.ru

Հովսեփյան Ռոման Աղասու*կենսաբանական գիտությունների թեկնածու*

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի
Հնակենսաբանության և էթնոկենսաբանության գ/հ խմբի ղեկավար
roman.hovsepyan@iae.am

Մարկոսյան Սալվինե Հակոբի

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի
ուսումնասիրության բաժնի կրտսեր գիտաշխատող
salvi.markosyan@gmail.com

Ներսիսյան Սոնա Արայիկի*պատմական գիտությունների թեկնածու*

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի
ուսումնասիրության բաժնի ավագ գիտաշխատող
sona.nersisyan2006@gmail.com

Պողոսյան Սվետլանա Հայկի*պատմական գիտությունների թեկնածու*

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Մշակութային
մարդաբանության բաժնի ավագ գիտաշխատող / Հայոց ազգագրության և
ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարանի փոխտնօրեն
svethnomuseum@yahoo.com

Վարդանյան Մակիչ Աշոտի

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական
գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի ավագ
լաբորանտ
makich1639@gmail.com

Տանաջյան Լուսինե Ասատուրի

սլավոնական գիությունների թեկնածու

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի
ուսումնասիրության բաժնի ավագ գիտաշխատող
lusine.tanajyan@gmail.com

Տիգրանյան Արմինե Հարությունի

ԵՊՀ Մշակութաբանության ամբիոնի դասախոս
armine.tigranyan@ysu.am

Օհանջանյան Ռուբեն Սամվելի

սլավոնական գիությունների թեկնածու, դոցենտ

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական
գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի գիտաշխատող
r.ohanjanyan@mail.ru

CONTENTS

I. GLOBALIZATION AND MIGRATION PROCESSES

Mihran Galstyan

To stay or to leave? Exploring the socio-cultural issue of potential emigration from Armenia 8

Lusine Tanajyan

The experience of integration of ethnic Armenian and non-Armenian immigrants in Armenia: comparative aspects 24

Sona Nersisyan

Armenia in the perceptions of Russian immigrants 37

Syuzanna Barseghyan

Main issues of Armenia's repatriation policy in the context of contemporary realities 49

II. IMMIGRANTS AND DISPLACED PEOPLE. THE SOCIAL-CULTURAL LANDSCAPE OF ARMENIA

Gayane Hakobyan

"Aleppo market" as a micro-model of the entrepreneurial activity of Syrian-Armenians 66

Garik Atanesyan

Authenticity discourse and staged heritage in post-Soviet Armenian tourism practices 78

Armine Tigranyan

Restrictions on participation in the cultural life of violently displaced Armenians by Azerbaijan: the example of Artsakh's Hadrut region 89

III. EDUCATION AND GLOBALIZATION

Ruben Ohanjanyan

Some issues of changing trends in professional cultural values in the context of globalization in the Republic of Armenia 114

Lusine Angelush

Language policy of the Republic of Armenia in modern conditions 124

Makich Vardanyan

Globalization discourse in the Armenian mass media: the context of educational problem 139

IV. TRADITIONAL AND MODERN FACTORS IN SOCIAL-CULTURAL TRANSFORMATIONS

Svetlana Poghosyan

Clothing as a socio-psychological indicator of Soviet- and post-Soviet Armenian society 158

Hasmik Abrahamyan

Roman Hovsepyan

The ethno-cultural role of food in the cycle of migration (preliminary study based on the materials recorded in Syunik region, Armenia) 174

V. DIASPORA ISSUES

Ruben Karapetyan

The problem of involving Armenians in the community structures of the Diaspora 190

Nare Galstyan

Perceptions of homeland in the Armenian community of Los Angeles 204

Nelli Khachaturyan

Salvine Markosyan

Mariam Harutyunyan

Ethnoreligious reconversion in the context of globalization (the experience of the Indian, Turkish and Irish diasporas) 218

VI. REPORT

Hripsime Asatryan

Some modern manifestations of children's folklore 238

VII. REVIEW

248

INFORMATION ABOUT AUTHORS 263

СОДЕРЖАНИЕ

I. ГЛОБАЛИЗАЦИЯ И МИГРАЦИОННЫЕ ПРОЦЕССЫ

Мигран Галстян

Остаться или уехать? О социокультурной проблеме возможной новой эмиграции из Армении 8

Лусине Танаджян

Опыт интеграции иммигрантов-армян и иммигрантов других национальностей в Армении: сравнительные аспекты 24

Сона Нерсисян

Армения в восприятиях российских иммигрантов 37

Сюзанна Барсегян

Основные проблемы политики репатриации Армении в контексте современных реалий 49

II. ИММИГРАНТЫ И ПЕРЕМЕЩЕННЫЕ ЛИЦА. СОЦИАЛЬНО-КУЛЬТУРНЫЙ ЛАНДШАФТ АРМЕНИИ

Гаяне Акопян

“Рынок Алеппо” как микромодель предпринимательской деятельности сирийских армян 66

Гарик Атанесян

Дискурс аутентичности и постановочное наследие в постсоветской армянской туристической практике 78

Армине Тигранян

Ограничения на участие в культурной жизни насильственно перемещенных армян из Арцаха Азербайджаном: пример Гадрута 89

III. ОБРАЗОВАНИЕ И ГЛОБАЛИЗАЦИЯ

Рубен Оганджян

Некоторые вопросы тенденций изменения профессиональных культурных ценностей в условиях глобализации в Республике Армения 114

Лусине Ангелуш

Языковая политика Республики Армения в современных условиях 124

Макич Варданян

Дискурс глобализации в армянских СМИ: контекст проблемы образования 139

IV. ТРАДИЦИОННОЕ И СОВРЕМЕННОЕ В СОЦИАЛЬНО-КУЛЬТУРНЫХ ТРАНСФОРМАЦИЯХ

Светлана Погосян

Одежда как социально-психологический показатель советско- и пост-советско-армянского общества 158

Асмик Абрамян

Роман Овсепян
Этнокультурная роль пищи в круговороте миграции (по материалам Сюникской области) 174

V. ПРОБЛЕМЫ ДΙΑСПОРЫ

Рубен Карапетян

Проблема вовлечения армян в общинные структуры Диаспоры 190

Наре Галстян

Представления о родине в армянской общине Лос-Анджелеса 204

Нелли Хачатурян

Сальвине Маркосян
Мариам Арутюнян
Этнорелигиозная реконверсия в условиях глобализации (на опыте индийской, турецкой и ирландской диаспор) 218

VI. СООБЩЕНИЕ

Рипсима Асатрян

Некоторые современные проявления детского фольклора 238

VII. РЕЦЕНЗИЯ

СВЕДЕНИЯ ОБ АВТОРАХ 248 263

ՀԱԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ԵՒ
ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ԱԾԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
6

անգլերենի խմբագիրներ՝	Գարիկ Աթանեսյան Արման Խաչատյան
ռուսերենի խմբագիրներ՝	Լիլյա Վարդանյան Լուսինե Անգելուշ
հայերենի խմբագիր՝	Սեդա Քուփեյյան
ձևավորում և էջադրում՝	Արտակ Հարությունյան

